# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 41

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ.-Ի ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Զառիթափ համայնքի ավագանու 2020թ-ի օգոստոսի 12-ի թիվ 6 նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի ավագանու 2020թ. թիվ 6 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Զառիթափ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողատեսքերը վարձակալությամբ տրամադրելու մասին:

3. ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի Գոմք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հողատեսքի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

4. ՀՀ Վայոց ձոր մարզի Զառիթափ համայնքի ճանապարհները տեսախցիկներով և չլուսավորված տարածքները լուսավորությամբ ապահովելու մասին:

5. Զառիթափ համայնքի Զառիթափ, Բարձրունի, Սերս և Սարավան բնակավայրերի հին ջրագծերը համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառելու մասին:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

1. Սմբատ Ասլանյան
2. Արգիշտի Բաբայան
3. Սասուն Վարդանյան

4. Գևորգ Գևորգյան
5. Գարիկ Գրիգորյան
6. Վիրաբ Սաղաթելյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 42

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թ.-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով, ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն՝

1.Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից՝
1 լոտ ծածկագիր՝ 10-022-0214-0010 0,04334 հա այլ հողատեսքը ներկայացնել մրցույթով վարձակալության:

2. Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից՝
1 լոտ ծածկագիր՝ 10-022-0204-0010 0.22457 հա այլ հողատեսքը ներկայացնել մրցույթով վարձակալության:

3. Զառիթափ համայնքի Մարտիրոս բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից՝
1 լոտ ծածկագիր՝ 10-033-0162-0078 0.48207 հա արոտավայրը ներկայացնել մրցույթով վարձակալության:

4. Մրցույթի համար մեկնարկային գին սահմանել հողերի զուտ եկամուտի 50 %- ը, քայլը՝ մեկնարկային գնի 10%- ը:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

1. Սմբատ Ասլանյան
2. Արգիշտի Բաբայան
3. Սասուն Վարդանյան
4. Գևորգ Գևորգյան
5. Գարիկ Գրիգորյան
6. Վիրաբ Սաղաթելյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 43

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետով, **ավագանին որոշում է՝**

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի Գոմք բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսված փոփոխությանը՝ ըստ որի նախատեսվում է բնակավայրի վարչական տարածքում գտնվող իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 2.4 հա այգին /կադաստրային ծածկագիր՝ 10-019-0318-0090/ փոխադրել ընդերքի, արդյունաբերության և այլ արդյունաբերական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

1. Սմբատ Ասլանյան
2. Արգիշտի Բաբայան
3. Սասուն Վարդանյան
4. Գևորգ Գևորգյան
5. Գարիկ Գրիգորյան
6. Վիրաբ Սաղաթելյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 44

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐՈՎ ԵՎ ՉԼՈՒՍԱՎՈՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ոստիկանության Վայքի բաժնի պետի 10.08.2020թ. թիվ 83/1583 գրությունը, **ավագանին որոշում է՝**

Տալ համաձայնություն

Զառիթափ համայնքի վարչական տարածքում սեփականության դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես անձնական ունեցվածքի գողության դեպքերի կանխարգելման և բացահայտման աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով ապահովել Զառիթափ համայնքի ճանապարհները տեսախցիկներով և չլուսավորված տարածքները լուսավորությամբ:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

1. Սմբատ Ասլանյան
2. Արգիշտի Բաբայան
3. Սասուն Վարդանյան
4. Գևորգ Գևորգյան
5. Գարիկ Գրիգորյան
6. Վիրաբ Սաղաթելյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 45

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ, ԲԱՐՁՐՈՒՆԻ, ՍԵՐՍ ԵՎ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԻՆ ՋՐԱԳԾԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և հանձնաժողովի կողմից ներկայացված արձանագրությունը, ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն

Զառիթափ համայնքի Զառիթափ /1200 գծմ, d-75 մմ/, Բարձրունի /500 գծմ, d-100 մմ; 700 գծմ, d-50 մմ/, Սերս /150 գծմ, d-50 մմ/ և Սարավան /150 գծմ, d-100 մմ/ բնակավայրերի չօգտագործվող հին խողովակաշարերը ապամոնտաժել, հաշվառել համայնքապետարանի հաշվեկշռում, հետագայում օգտագործել համայնքի բնակչության կարիքների համար:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

1. Սմբատ Ասլանյան
2. Արգիշտի Բաբայան
3. Սասուն Վարդանյան
4. Գևորգ Գևորգյան
5. Գարիկ Գրիգորյան
6. Վիրաբ Սաղաթելյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ